

(Տեւ Հո. ԽԲ, էջ 347)։

Ի ՊՈՄՓԵՑ

Բ

Պոմպեյի տառնկութիւնք. — Փաղղիացի քոչակաւորք. — Քաղղախանդրիւն դէպքք. — Ճակաւնաղայի քաւորք. — Սեկարեյիկն 'ի Պոմպեյ. — Վաշքիշխար. — Խոշորան Սշտարակիւ. — Փարսից յոշորակաւորքիւնք. — Անակնկալ յարուցեալ մը։

Հիմա որ յիշատակներս կը յեղեղեմ՝ բաց յայլոց՝ երկու գլխաւոր առաւելութիւն կը նշմարեմ, որ սիրտս մասնաւոր կերպիւ Պոմպեյի հետ կապած են. ասոնց մէն կը հայի բնութիւն, միւսը մարդկային բարեկարգութիւն. Բնտինս աւելի մասնաւոր կերպիւ. Կերտացւոց կը պատկանի. Խոտիկանութեան աչքը այնպէս ուշադիր է՝ որ տանդ բովանդակելոց վրայ սիրտդ կրնայ ապաւովաբար հանդիլ. Եթէ գոզը ընտանի չէ՝ կրնաս վտանգ ըլլալ՝ որ ոչ որ անոնց կը գաշի. Ոմէն երկու քայլ առնելու՝ Խոտիկանութեան սպասաւորի մը կը հանդիպիս. ոչս սպասաւորք բազմութեամբ ամեն զին ցրուած, միշտ կանգուն, միշտ ուշադիր վերվար քայլելով ամենուն շարժմունքը կը դիտեն։

Բնական տունս փողոցի դուռ չունէր, կամ թէ ունէր՝ ոչ երբեք կը գոցուէր։ Սենեկի դուռը մանապէս գիշեր ու ցորեկ բաց էր. Եթէ գոզ մը շար դիտաւորութիւն ունենար, շատ էր սանգոզէն վեր սրահը ելլէր. տանը ամեն սենեկի դուռը բաց կը գտնէր, և տնայրք կամ 'ի բուն և կամ արտաքս։ Բայց այս բանս երբեք չի հանդիպիր. գոնէ ցորչափ հոն եղա՝ չլսեցի։

Երկրորդ առաւելութիւնն է բնութեան կամ օդը. տարին ութ ամիս միակերպ անամալ երկինք մը կը պարզի ընդհանուր կղզւոյն վրայ. արեւը միշտ միակերպ պայծառութեամբ արեւելքէն կ'ելլէ, և անայլալակ արեւմուտքը կը խոնարհի, ասկեղէն

հորիզոն մը հետոցը ետէ էն նկարեալ թողլով. Բայց այս ութ ամիսն ետքը՝ չորս տնխոստախիւի անձրեային ամիսը կը յաջորդեն, յորում՝ բնութիւնը երկնից սահանքը կը բռնայ, ամենօրեայ և անընդհատ փոթորկալից կատաղութեամբ. Ոյն ատեն՝ Պոմպեյի բնակութիւնը անտանելի կ'ըլլայ, մասնաւոր եւրոպացի գաղթականաց, որոց շատը հեռանալով՝ բարձունքը կ'ապաւինին. Սակայն այն չորս անհաւոր ամիսներէն հտըը, երբ բնութիւնը իւր կատաղութեան բուռն թափը կը սպառէ ու ցամաքութեան միջոցը կը սկսի, չկայ երկիր մը, կ'ըսեն, որ գաշաց, բլրոց, բուսականութեան և ընդհանուր բնութեան գեղեցիկութեան գաղափարը տայ։

Իմ բնաց դիս այս երկրորդ եղանակին ձգեմ էր 'ի Պոմպեյ. սակայն թէպէտ և Խոտիկանի էր ինձ, այլ հուսկ ուրեմն այն երկրորդից երկնից պայծառութիւնը, և միակերպ արեւուն կիղիշ փայլը, ինձ փափագելի կ'ընէր մթնադարի փար պայլալութիւն մը. Որչափ կ'անձկայի դոյզն ամպոս մը, համառօտ փոթորիկ մը, գոնեա երկնից վրայ քանի մը մթին ամպեր, յորոց քանի մը զովագուցիչ կոթիլք իյնային այն ծարափ ու հրկիւղեալ և փոշիւից զետնին վրայ. Ունայն ակնկալութիւն. Ինչ արեւ որ ողջունեց զիս առաջին օրը, դարձեալ մի և նոյնը վերջին օրը դիս շոգենալ յուղարկեց. Բայց և այնպէս սուէտ այս միակերպութիւնը իւր քաղցրութիւնն ունի. մեզի նըկատմամբ մասնաւոր, որոց երբեմն մեր կիմային պայմանը օրերով արեգին երեսը փափաքելի կ'ընէ։

Սրբի բնական տունս 'ի Ֆորդ, կանխակղզւոյն բերդը, կենդրոնական տեղ մըն էր, ուր կը զետար բուն առեւտրական և զործունէութեան կենտրոն. Մեզի հանդէպ բողոքականաց հազարաւոր ճիւղերէն մէկի մը ժողովատեղին, որոց ջերմառանդից և ռանդը՝ կարծես դիտած էր երեկոյեան ճաշին անգործ խոսակցութիւնը երաժշտու-

Թեամբ ու երգօք համեմեղ, վաթսուս քայլ անդին՝ Հայոց և կեղեցին, որոյ բախին խորհրդաւոր մթութիւնը մշտապես կանթեղի մը լույսը կը փայտաւէր. անոր ալ կից լաւիւնաց եպիսկոպոսարանը հանգերձ իւր ժամատեղեալը:

Որչափ հոյակապ չէր որ անգղիական վարչութիւնը այն փորձ կոչեցեալ ընկարծակ միջոցին մէջ կրցեր է նրուկով կանգնել 'ի զարգացումն քաղաքին, մեծագոյն մասը իմ բոլորս կը գտնուէին. գանձատունը, դիւանը, համալսարանը, բարձրագոյն տեսնանը, թղթատունը, հեռագրատունը, Հնդկաստանի կայսրութեան յիշատակարանը, Կալեսի իշխանին ձիաւոր արձանը, և այլ չեղբ ու հոյակապ շէնքեր: Այլ կը դըսնոյր ամեն անգամ որ այն մեծագործութեանց բովէն կ'անցնէի, և սիրտս կը բացուէր այն գեղեցիկ ծաղկունքը դիտելով որ այն շէնքերը պատող պարտկաց մէջ կը մշակուէին: Եւ եթէ երբեք այն փառահեղ յինուածոց պակսութիւն մը կը գտնէի, ընդհանրապէս զօթացի ճարտարապետութեան միակերպ տն էր, որ հուսկ ուրեմն նորութիւն սիրող մարդուն աչքը կը յոգնեցնէ:

Օրերի կ'անցնէին այն հետաքրքրութեան արժանի փողոցները պտտելով 'ի տես ինձ անսովոր տեսարանք. ամեն փոքր դէպք ինձ զուարճալի կը թուէր իւր նորութեամբը: Այ այնքան տեղեակ երկրին ներքոյն՝ կը համարէի թէ Պոմպէ գտնուելովս ընդհանրօր Հնդկաստանին ճշգրիտ գաղափարը կ'ունենայի. որովհետեւ քաղաքը Հնդկաստանի բոլոր ժողովրդոց ժողովրդատեղի մը կրնայ համարուիլ: Ստէպ երկկողման ճաշուն բազմելով՝ օրուան տեսածներուս ու տղաւորութեանց վրայ կը խօսակցէիք: Քաղաքիցին, որ նոյն տունը ինձ ընդհակառակ էր, և որ շատ տարինքէ 'ի վեր Հնդկաստան կը գտնուէր, ուր շատ տեղ ճանապարհորդած ըլլալով՝ քաղ տեղեակ էր աշխարհին, ինձ սովոր կը ըսելով՝ թէ Պոմպէ չէր Հնդկաստան, թէպէտ և ընդհանուր Հնդկաստանեայց ժողովրդատեղի էր: Հնդկաստանի ճշգրիտ գաղափար մը ունենալու համար հարկ էր ներսերը քայլել. հարկ էր գտնէ Տէլէի, Ճակերնակ կամ Ճականուղա և կամ բուն իսկ Պէնարէս երթալ. հոն բոլորովին նոր տեսարան հանդիսանալու էր ինձ: Եւ ապա իւր խօսքերը հաստատելու գիշերով գլխէն անցած դէպքերը կը պատմէր: Ուշի ուշով մտիկ կ'ընէին բոլոր սեղանակիցք, ոք ինձ նման Պոմպէյէն գուրս ելած չէին:

Ինձ յաւէտ հետաքրքրական էր կրօնա-

ՊԵՐԱ Ա.

կան խոսակցութիւնը, որ տնայէս ճշգրիտ գաղափար կրնայ տալ ժողովրդեան քաղաքական կրթութեան ու բարուց, և շատ անգամ խօսքը անոր վրայ դառնալով ահապատես Գաղղիացիոյն զոյցը՝ ըստ ընդարդոյ տվութեան իւր ազգայնոց՝ անհատում էր: Սր մը ճակատագայի թափօրին նկարագրութիւնն ընելով այսպէս ըսկըսաւ ըսել.


— Տէլէի եղած տտենա, որ մը հնդիկ զգեստով մէկ մը գիւս կը գիմաւորէ. այն զգեստին և այն հնդկանքի մարթին տակը ոչ որ կրնար գուշակել թէ Եւրոպացի մը ըլլայ. և սակայն գիւս դիմաւորողն ոչ միայն Եւրոպացի մըն էր, այլ և որ ինձ աւելի զարմանալի երեցաւ, գաղղիացի ոմն էր և Բարոնոս Թաղերին մէկի մը ծնունդ: Անհատաւ բնաւորութիւնը և կենաց պայմանը գինը բաղդախնդիր մը ըրեր էին. որ աշխարհքէ աշխարհք անցնելով՝ Հնդկաստան ինկէր, որ Հոս տեղովն ոչ միայն կենցաղավարութեամբ այլ և կրօնից տեղացւոյն նմանիլ, Պրահմին մը ոտքը աշակերտեր էր Մանտի կրօնը սորվելու: Պրահմինը յաղաղիչութիւնն էր, որ է ըսել՝ չորս փեռանքն, որ Հնդկաց սրբաւոր գրքերն են, սորված էր: Այս Պրահմինը վարդապետելով իրեն ուսոյց, թէ Հնդիկի՝ որ հոգեփոխութեան կը հաւատով ոչ համարին թէ սրբոց՝ այսինքն քրմաց հոգիք՝ չիտակ երկինքը կ'ելլին ու կ'երթան Պրահմային հոգւոյն հետ կը միանան՝ յաւիտենական իրաւութիւնը վայելելու: Իսկ այն Պրահմիններուն հոգիները՝ որ երկինքը չեն իլլեր, եղանց, կովուց և ուրիշ պաշտելի կենդանեաց մարմինը կը մանեն: Ռաճաներուն ու Կապալներուն հոգիները տեսակ մը շատ քաղցի համարելու կապիկնութիւն մարմնոյն մէջ կը բանտուին. իսկ հասարակ թաղաքացւոց, վաճառականաց և արհեստավորաց հոգիները՝ պիտի կենդանեաց մարմինը կը մտնեն, որպէս զի նոր թշուառութեանց կենեքով մը սրբուին: Այս ամենէն դուրս քաղաքաց զասակարգը կու գայ. ասոնց համար Հնդիկը կը համարին թէ հոգի չունին. սակայն Պէնարէսի պառաւանջ կարծիքը ասոր նկատմամբ տարբեր է. ասոնք կը համարին թէ քաղաքացի հոգի ունին, միայն թէ այս գաղաւ մարդոց հոգին՝ չարագործող ոգիներուն երևակայական մարմինը կ'երթան կը բնակին: Այս ոգիներէս ոմանք, յորոց մին է Ռամանա, հրէշաւոր հսկայք են. մարդոց ամենէին վնաս մը չեն ընէր, որովհետեւ շարունակ զբաղած են գից հետ կուտելու. գործնք և

մերթ ընդ մերթ յաղթահարելով կը ջարդեն ու կ'ուտեն, այլ առանց անոնց անհամար թիւը զգալի կերպով նուազեցնելու: Այլ, ինչպէս Հիսիմայա, անտառաց ու գերեզմանոցներուն մէջ կը բնակին, և վամպիրներու նման՝ աղջկանց արեան ծարախ են, զոր գիշերը անյազարար կը ծածեն, և կամ թէ փոքր տղաքը կ'ուտեն:

Երկայն ատեն Հնդկաստան թափառելով վերջապէս մորթը արեւուն ֆրոնտիէնէն հրկիզեալ մութ գոյն մը առաւ. անոնկ որ տեղացւոց հետ կը շփոթուէր: Մերթ մութ րաւով, մերթ աշխատութեամբ, և գրեթէ միշտ խեղճաբար ապրելով, հուսկ ուրիմն 'ի Ճականադա կը հասնի, ուր ժողովուրդը մեծ շարժման մէջ կը գտնէ: Այն քաղաքին մեծագործ տաճարին դիմացը կեցած՝ կը դիտէր այն մարդկային մտաց ստեղծագործութիւնը՝ որոյ այլանդակ ու խճողած զարդերուն խմաստը հասկնալ չէր

կրնար: Անոր ամեն մէկ փոքրիկ մասին վրայ այլանդակութեան կնիք մը կը նշմարէր: Երեւակայեալ կենդանեաց, ճեմելիքներու, սեանց կարգերու կոյտ մըն էր տեսածը. որոց զարդ կ'ընէին անհամար կապիկներու, փիղերու, կովերու, սլալատէրներու, և ամեն հասակի պրահմիներու արձանաց բազմութիւն մը: Այսպիսի զարդերով հո՞՞ չէնք զատիկոնէ զատիկոն գէպ 'ի երկինքը կը բարձրանար, նման աշտարակին Բարեկոնի:

Հնդկի վերմուռնդից անհուն բազմութիւն մը կը տեսնէր, որ ամեն կողմէն փութալով հոն կը դիմէին. Պրահմիք, գոյնելով ձեփուած Ֆարիք, ուխտաւոր արքէպիսկոպոսներն ունենալով նուիրակն եղներ՝ ոսկեղոծ ու պսակեալ եղջիրներով, և կիսամերկ կանայք՝ որ ոտքէ մինչև ցլուխ մետաղեայ ապարանջաններով ու քառամանակներով ծածկուած, կը զբաղէին



Հնապարատուն:

բակոտին պաշտամանց կարեւոր սրբիչ ջուրն ու հալած կարազը պատրաստելու: Այս ամենայն պատրաստութիւնք թափօրի մը հանդէսին համար կ'ըլլային, որ նայն այն օրը տեղի պիտոր ունենար:

Հնդկաստան, ձեզի փոքր տեղեկութիւն մը տալու համար, կը շարունակէր ըսել զաղջկացին, չկոյ չափաւորապէս նշանաւոր տաճար մը որ իւր թափօրը չունենայ. սակայն այս Ճականադայի տաճարը՝ ամիսը մէկմը թափօրի մը հանդէսը կատարելու առաւելութիւնն ունի:

Այս կոսնական հանդէսներուն առթով՝ զլիսուոր կուռքը մեծ հաստակաւորոց կառոյցի մը վրայ դրած կը պտտընեն. կառասանիք մեծ, ստուար, ու լեցուն ին, և ոչ սովորական սայլից նման: Անուոց լիտուոնք ծանր գերանք են, որոց վրայ կը հանգչի երբեմն տասնըվեց մեղր բարձրութեամբ ծանր շէնք մը: Շէնքին խարսխին տախ-

տակներուն վրայ էրիկ մարդոց ու կանանց լիտի նմանութիւնք փորուած կան: Անկէ գէպ 'ի վեր չէնք զատիկոնէ զատիկոն միշտ նեղնալով կը բարձրանայ, անանկ որ բոլոր մեքենան բրգաձև կերպարանք մը կ'առնու: Այսպիսի հանդիսաւոր օրեր սայլը՝ նկարեալ կտաւներով, աղնիկներով աններով, պսակներով ու ծաղիկներով իր զարդարուն, և կուռքը, որ ուրիշ բան չէ թէ ոչ փայտի կոճղ մը կոշտաբար արձան ձևացուցած, և որու մէջ կը համարին թէ Քրիշնա գից անհրժեշտ ըլլայ, ամեն նաճօխ զգեստներով կը հագուեցնեն, և աղնիկ և մեծ գին ունեցող գոհարներով կը զարդարեն:

Այսպէս զարդարեալ արձանը սայլին զագաթը՝ տատնանաւոր բարձր տեղ մը զետեղած է: Անոր պատուանդանին աստիճաններուն վրայ բազմութիւն մը պալաւոր կանանց կեցած, ոմանք սիրամարգի

փետուրներով շինած հովաճարներով ըզ-
կուտքը կը հովաճարին: այլք օգու մէջ
փոքր գրօշակներ կը ճօճեն: Աստիցմէ դատ
շատ մը մարդիկ՝ կատաժվորիւ նպատաւ,
կաւ սայլին վրայ ելած՝ անընդհատ աղա-
ղակներով ժողովրդեան եռանդը կը խրա-
խուսեն. որոնք Հազարաւոր բաղմութեամբ
ձիւռ պէս լծուած՝ հաստ շուփներով ըզ-
սայլը կը քաշեն:

Անպատմիկ խառնակութեան և աղմկի
մէջէն սայլը ծանրաբար կը յառաջէ: Այն
դից ընկերացող անհամար բազմութիւնը կը
գնդակ, առ հասարակ տքը, կանայք, տղայք
կը կանչեն, կ'երգեն, կը ծիծաղին, կու լան,
և չերեկայելի խռովութեան մը տեսարա-
նը կու տան, ի ջոգութեամբ և անսասակ
երևութով: ուր խորհող մարդը ոչ խելք
կը նշմարէ, ոչ վայելչութիւն և ոչ պատ-
կառանք:

Մինչդեռ թափօրը ծանր ծանր կը յա-
ռաչէ, այլանդակ ու կատաղի աղաղակները
երթալով կը սաստկանան, որոց արձա-
գանդ կ'ընէ մարէ շանցներու անհամա-
ձայն, անիրատու և աղմկալից երաժշտու-
թիւն մը, որ մարդուս ականջը կը խլացը-
նէ: Պարաւոր կանայք իսկ, որ տասնէ հան-
դէսներու միշտ բազմութեամբ կը վազեն,
ցոփաբար պար կը բռնեն, մինչդեռ կ'ոնա-
մով ջերմեանդք սողալով՝ սայլին առջևը
կը նետուին, շատք պատիւ ու երջանկու-
թիւն համարելով անոր անուոց տակը
ջախջախելու: Այլք սոյնպիսիք դարձեալ՝
իրք աղաղակարողք՝ սոյլին վրայ հաստա-
տուած շարժութիւն ու ճանկարիւր գերանի մը
ճանկը՝ ուսերնուռ մինք մէջէն անցուցած
կը կախուին, և օդու մէջ ճօճանակի նման
կը ճօճան:

Այս հռչակաւոր թափօրներուն ներկայ
ըլլալու համար Հնդկիք անհամար բազմու-
թեամբ 'ի ճականագա կը դիմեն. անանկ
որ մինչև 300,000 ջերմեանդք ուխտաւոր
կը համրեն տարուէ տարի: Եւ շատք յայս-
պիսեաց ազաշխարհոյ կերպարանօք կ'ը-
նեն բոլոր ճամբան, որ երբեմն տարիով ալ
կը քէշ: Կան աստիցմէ որ իրենց տանը զըռ-
նէն ակնհայտ մարմնոյն հասակաւոր ճամբուն
գետինը կը չափեն խնայով ու ելլելով, ա-
նանկ որ բոստ հեռաւորութեան երբեմն եր-
կու և աւելի տարի կը քէշ մինչև ոչս դից
տաճարը ուխտաւոր հասնելու: Յաւալին
այն է որ այս ուխտաւորաց շատք գիւռ նը-
պատակին չհասած ճամբուն վրայ կը մեռ-
նին. և շատ այլք 'ի գարձին՝ գիւռ տուն
չհասած՝ ամրոցի ընտանիքով կ'իյնան ու
գազանաց կեր կ'ըլլան: Անոր համար բո-
լոր այն ճամբանները որ գէպ 'ի ճականագա

կը տանին, միշտ մարդկան դիակներով լե-
ցուն են. և չազալք և անգեղք և այլ գա-
ղանք, կարծես մարդկային դիակներով սը-
նանելու սովոր են: Հայուող եղած է որ
տարուէ տարի միայն ճականագայք միմա-
կը այս ուխտաւորներէն 5000 մարդ ճամ-
բաներուն վրայ կը մեռնին: Արդարաւան
բան է որչոյն ընտանիքներ տեսնել որ ճամ-
բուն վրայ կ'աւաճեն ինկած ետեւ ետեւ կը
մեռնին, մինդեռ չազալք և անգեղք 'ի
հեռուստ կիցած անոնց անկարութեանը կը
սպասեն որ վրանին ինկնան ու պատռուին:


Այլ ես այս տեղեկութիւններս մէկդի
թողով բաղդախնդրիս գէպին դառնամ:
Մինչդեռ բազմոց դիտելու հետ էր, յան-
կարձ տեսնէ որ դռները կը բացուին և ա-
հագին սայլը երևան կ'իջէ: Խիտն ժողո-
վորդը յախուռն վրայ կը թափի և չուան-
ները ձեռք կ'առնու. սոյլին վրայ խրախու-
սիչք կանգուն կ'աղաղակեն, ու դիւահա-
րական շարժմանքներով կը քաջալերեն
զջերմեանդները որ զսայլը քաշեն: Այն
հազարաւոր բաղկաց ուժովոր ահագին մե-
քենայն ծանր ծանր կը սկիի շարժիլ որ
քաղաքին փողոցաց միջէն իւր չրփան ընէ:
Բաղդախնդիրը չհամարձակելով սոյլին
լծուելու՝ անոր քովէն քալող քանի մը
ջերմեանդից կ'ընկերանայ. և յուսով թէ
կարենայ քրմիւրն ու պրահմաններէն մէկ
քանի դրամ ողորմութիւն ձեռք ձգել, ա-
նոնց կ'օրհնակին ջերմեանդն ամփոփումը
կը կեղծաւորին: Իր մորթոյ գոյնը և դգե-
տը դիմքը Հնդկի մը համարիւր տալով զըր-
ջակայքը կը խորէ. և նոյն այս բարեպա-
տեհ գէպըրը կինըր մահուան վտանգէ կը
խալուէ:

Սայլէն չորս քայլ հեռու գտնուելով,
կը տեսնէ որ իր քովէն քալող ջերմե-
անդներէն մէկը ստէպ ստէպ գլուխը
դէպ 'ի սայլը դարձնելով կը դիտէ այն ա-
հագին, լայն ու միակուս անիւնները, որ
ծանր ծանր հողովելով այն ահագին մեքե-
նայն կը կրեն: Յանկարծ տեսնէ որ այն
մարդը գոյնը այլափոխելով ստոյի, ստոյի
կը սկիի կանչել, և անմիջապէս վազելով
սոյլին առաջին անուրն առջևը գետինը կը
տարածուի: Բաղդախնդիրը համարելով
թէ գլուխը դարձած ըլլալուն դիպուածով
գետինը ինկած ըլլալ, փրտն կը վազէ և
մէկ սուրունքին բռնելով ծանր ծանր յառա-
ջացող անուրն առջևէն մէկդի քաշել կ'ու-
գէ: Այսպէս պրահման մը այն յանդու-
զըն գործը տեսնելով, սրբասէր նախան-
ձու վրէժխնդրութեամբ լցուած՝ բարեգոր-
ծին վրայ կը յարձրիկ, գաւազանաւ գլուխը

կը հարուածէ, և ապա երկու հզօր բաղուկ-
ներովը զինքը գրկելով՝ ամբողջ մարմնովը
կը վերցնէ ու սալլին առջևը կը նետէ, միւս
սալլին քովը: Մի և նոյն ատեն քրմաց
երգերը, թմբուկները, փողերը, սրինգներ-
ը՝ զարհուրելի զգրդիւնը կը սաստկացը-
նեն, որպէս զի ջախջախութեամբ ցաւոյ ու
դաղակները չլսուին: Խորհրդազարար մեր
մարդը այս անակնկալ գէպէն չի շփոթիր.
մինչդեռ սալլին անիւ՝ զարհուրելի ցա-
ւոյ աղաղակներու տակ այն թշուառ վեր-
մեռանդին ոսկորները կը ջախջախէ, ինք-
զինքը ու ժով մը կը ցնցէ, և այնու շարժ-
մամբ սալլին տակը կ'իյնայ ըստ երկայ-
նութեան. այնպէս որ շարս անկները քո-
վէն կ'անցնին առանց փորձելու կամ ող-
նաշարին վնասելու: Միայն անուին մէկը
ուսին քովէն քսուելով՝ թիկնակէր կը
կոտրէ, որ յետոյ անոր կուգ մնալու պատ-
ճառ կ'ըլլայ:

Հնդկեր ստորի կը կոչեն այն կամուրը զու-
հը որով մարդ իր կեանքը կը նուիրէ, հա-
մարելով թէ այնու մահուամբ կը հաճոյա-
նայ իրեք կամ չորս միլիոն զից մէկի մը,
զորոտը իրենք կը պաշտեն:

Այս ակամայ ստորին ամենեւին տղաւո-
րութիւն չըրաւ այն վերմեռանդն Հնդկաց
վրայ. որովհետեւ եթէ մէկը այս առթով
անմիջապէս մեռնելու բարեհաղղութիւնը
չունենայ՝ մտքերին կը գնեն թէ մեղք մը
գործած պիտոր ըլլայ 'ի նախատինս հընդ-
կային երրեակի դից, Պրահմայի, Վիշնուի և
Սիվայի: Այսպէս եղաւ այս մեր մարդուն
ալ. Հնդկեր զինքը մեղաւոր և անարժան
համարելով նոյն տեղը կ'ստամեն թողին:
Մէկ քանի Սուտրայք որ հիւռուանց սալլին
ետէն կ'երթային, — որովհետեւ իրենց գա-
սակարգին մարդիկ սիրոյ կը համարին ու
չեն համարձակիր այն սուրբ առարկայից
մերձենալու, — վրան զթոսցին, ու զինքը



Բարձրագոյն տաճար:

վերցնելով հիւանդանոցը տարին: Բաղ-
դանդիւրն ուզելով պատճառն իմանալ,
հարցոյց անոնց թէ ինչո՞ւ այն վերմեռանդ-
ները զինքը ողջ-թողելը դնացիր էին:

— Վասն զի, պատասխանեցին, յանդի-
շատասի ժամանակաց եկած սովորութիւն
մըն է, որմէն և բան մը փոփոխել կարելի
չէ յաւիտեանս. որովհետեւ ամէն բանի
մէջ անյիշատակ սովորութիւնը սուրբ ճանչ-
ցուած է թէ 'ի յայտնութենէ, թէ յա-
ւանդութենէ և թէ 'ի Վէտայց Մանուի: —

Այսպիսի վատ և կրօնամոլութեամբ ան-
գութ ժողովրդեան մը անտեղի հաւատա-
բանութիւններէն բոլորովին զոտւած, մեր
բողոքականները միտքը դրաւ որ առողջա-
ցածին ալս ամենայն ջանք ընէ Եւրոպայ
դառնալու. զոր և բաղում աշխատութեամբ
վերջապէս 'ի գործ դրաւ:

— Ինչպէս որ մըն ալ, և կարելի եղածին
չափ չուտ, ես ալ պիտոր ընեմ, ըսի, ճար-

տարախօսին անհատնում խօսքը կտրելով:

— Սակայն ես չէ, պատասխանեց զաղ-
դիացին: Այսչափ տարի հոս ընակելէս յե-
տոյ, այս երկիրս գործէ իմ հայրենիքս ե-
ղած է: Տեղացւոց կրօնական կամ ինչ
և ինչ ուրիշ խնդրոց մէջ ամենեւին անմասն
ըլլալով, չունիմ պատճառ երկիրս առնելու.
Թող որ և մորթա իսկ այսուհետեւ կլիմա-
յին յարմարած է: Սակայն ցորչափ դու
հոս մնաս՝ ձեռքէս եկածը կ'ուզեմ ընել
քաղաքս և քաղաքացիքս քեզի ճանչցնե-
լու: Եւ նախ եթէ քեզի հաճոյ է առաջի-
կոյ կիւրակէն երթանք Փարսից Լաւթեան
կամ Մահու Աշտարակը տեսներէ, —

Ի Պոմպէյ անկարելի բաներէն մէկը
տաճարները մտնելն է. Հնդկեր անողորմ-
ելի են. թոյլ չեն տար քրիստոնէից ինչ և
ինչ առթիւ տաճար մը մտնելու: Եւ եթէ
անխաչեմ ոմն բռնի ուզենայ մտնել, ու-

տիկանութիւնը գրեթէ պատասխանատու չըլլար հետեաներին. և այս բանս կը յաւելուէր Եւրոպացի քրիստոնէից զգուշութիւնը: Քանի մը անգամ փորձ փորձեցի տաճարներու դուռը մօտենալով. բայց հան հսկողաց երբ ներս մտնելու կամքս յայտնեցի, խոյնք ժխտական պատասխան առի: Մի անգամ ևեթ կարող եղայ փորք և անպաճոյք մատրան մը դուռը մերձենալ ու փորք արարողութիւն մը տեսնել առանց հասկընալու:

Ի շուկայն մինչդեռ խանութներուն առջևէն կ'անցնէի 'ի տես առ և արոյ վաճառաշահութեան և հեղկայն ձեռագործաց, յանկարծ երաժշտական գործեաց աղմուկ մը ականջս խայթեց: Ի հետաքրքրութենէ շարժեալ քայլս այն կողմը ուղղեցի դէպ ուր կը տեսնայի որ քաղաքի կիս մօղովորդներն կը դիմէր: Փոքր կրպակի մը դռնէն տեսնեմ շնորհի կը մտնէր, շնորհի կ'ելլէր. Բնէ էր եղածը. ստուգելու համար համբերութիւնը ոտն առ ոտն կը հետեւէի նս ալ բազմութեան, որ ջերմութեան ամբողջութեամբ կը մերձենար, կը մտնէր, կ'ելլէր ու կը հեռանար: Երեկոյեան դէմ էր և կողոցները կը սկսէին նսնմանայ: Վերջապէս զրան կըցայ մերձեալ. փորք սենեակ մըն էր ամենին կրպակի մը նման. գետնէն գրեթէ մերթիւշափ արածը սենեկին կէսը առխառակամած էր: Քարձինք քուրմ մը, կիսամերկ, սքրունքները ծալած նստած էր. քովը փորք կրպակարանի մը վրայ իւզային նիւթ մը կը հալէր: Հանգէպ պատին վրայ մէկ քանի փորք կուգրեր. քանի մը գրեթէ կիսամեռ հրազք ան նսնմ կրպակը, որ մատուռ մըն էր, կը լուսաւորէին:

Շատ մը թմրակահարք ու փուլահարք դիւարաւ աղմկելով զոգոցովորդը կը կոչէին. այն հրաւերքին հօտ՝ այր, կին, մանչ, աղջիկ խառն, ափ ափի եկած կը մտնէին, կը ծռէին քրմին առջին, որ մատը այն հայեցուցած նիւթոյն մէջը միտելով իւրարանջուրին ճակատը կը դրոյմէր: Եւ անոնք 'ի փոխարէն՝ ափսէի մը մէջ իրենց դրամական նուէրը կը ձգէին, և վերականգնող պարկեշտութեանը գունէն կ'ըլլէին կը մկնէին:

Թէ ինչ էր այս արարողութեան նպատակը չկրցայ հասու ըլլալ. զի այն բազմութեանը մէջ չգտայ մէկ մը որ անգղիարէն խօսէր: և ոչ այնպիսի մը որ յանձն առնուր իրենց սրբապան արարողութեան մը մկնութիւնը անհաւատի մը ականջը լեցունելու:

Այս կրօնական խտրութեան կը հետեւին նաև Փարսիք. այսու տարբերութեամբ մի-

այն որ Եւրոպացոյ ընկերակցութեանը ըզմակաթ բլլալով գլորին է բարեկամաց ձեռքով թողտուութեան մը հրամանը ձեռք ձգել: Մեզ այլ այնպէս եղաւ, և չորս այցելուաց անուններով առանձին տոմ տակ մը 'ի լուսթեան Աշտարակին գուռը բացաւ մեզի:

Համբան Պէք Պէյին ծովախորշին քովէն կը քերէ, որ ընդարձակ և գրեթէ կիսաբոլոր աղիղ մըն է, որու մէկ ծայրը դէպ 'ի ծովուն մէջ երկնալով կը ձևացնէ Մալապար-Հիւ-բլուրը, իսկ անոր հանդէպ միւս կողմը Քարապիլ ծայրն է, ուր կը գտնուին Անգղիացի զօրաց զինուորանոցը, Փարսուր և քրիստոնէից նախկին գերեզմանոցը:

Կառքերինս կէս ժամու ընթացքէն ետքը զմեզ Մալապար-Հիւին ոտքը կը հասցնէ, ուսկից ծանր ծանր կը սկսինք վեր ելլել: Մալապար-Հիւ կը համարի ճոխ Եւրոպացոյ և աղետական չնդկաց թաղը. ճոխք 'ի գաղթական Եւրոպացոց, 'ի Փարսից և 'ի շնդկաց՝ այս տեղոյս վրայ կանգնած են իրենց անգորք ճակարակները. ամենը պարտիզազար, ամենը գեղեցիկաշէն, ամենը վայելչատես, մինչև նախանձելի ընել այն վայրը: Բուստականութեան գեղեցկութիւնը արուեստին հետ կը զուգնթան. անկից աճող ամանիկ բուռն է, որ անհրաժեշտ և անգորք մարդուս չուփաւ որիք ձեռքին կարօտ է: Եւ տեղիս ոչ միայն գեղեցկութիւն կը մատակարարէ բնակաց, այլ և օդոյ զովութիւն, որովհետեւ ծովային հողմիկը անգորքար կը շնչէ: Ո՛րչափ քաղցր ու յանկուցիչ ըլլալու է այն եւրոպացոյն որ քաղաքին լքուցիչ աշխատութիւնէն ու ջերմութենէ խոնջ երեկոցեանգէմ կառք այս 'ի հանգստարանը կ'առանձնանայ: Առաւօտեան չըման մը այն ծաղկալից ճամբաներուն մէջ այնպէս ախորժիկ է որ երբեք մարդուս մարէն չելլեր. այնպէս տալուարած է մտքիս մէջ՝ որ ինձ ըզմայի կ'ընէ միւսանգամ հոն գրտնուել: Բլրէն քիչ մը վեր ելելով անկիւն մը կը հասնիրք որ դէպ 'ի ծով կ'երկնայ. այս անկեան վրայ կանգնած է քաղաքապետին ամուսնոյն ամսարանոցը, որ կրնայ ըսուի թէ Պոմպէյի ամենէն զուարճայի և ամենէն զով տեղը ըլլայ: Սակայն մօծաւեր եղանակը, որ է անձրեաց և ամառապայ ժամանակը, անրեակիւն է կ'ըսեն. որովհետեւ բուռն հողմոց և ծովու ալեաց կատաղութեանը դիմագրաւ է:

Ասկէ քիչ մը անդին վալբիլար պղտի շէնը կ'ելլէ առջևինս: Հնդկիք քաղաք սարք

կը կոչեն այս վայրը. որովհետեւ թէ հին ու համբաւաւ որ տաճարը կան կանգնուած է թէ պրահմիններու անհուն բազմութիւն մը. թող այն կրօնական աստիգութիւն որ տեղ ոյս հետ կը շաղկապին: Բայց չինիս էականագոյն առարկոյն հնազոյն տաճար մըն է, որու համար Հնդկից կ'առասպելաբանեն թէ Ռամլոնա թագաւորը՝ Պիլգա՝ Ռամայի կնիկը՝ յափշտակած ըլլալով, Ռամա միտքը գրաւ զայն պատուհասել և իւր կնիկը ազատել: Այսու դիտմամբ ճամբայ ելաւ Աշլան երթալու. ստիպն երբ այս տեղս հասաւ, ուր հիմա տաճարը կանգնած է, օրը երեկոյացաւ և ինքը դադարեցաւ գիշերն անցնելու: Խորշմա իր եղբայրը սու վոր էր ամեն իրիկուն ոգիի մը ձեռօք Պէնարէսէն յիկեալ մը իրեն զրկելու, որ-

տէս գի իւր ջերմեանդութեան պաշտօնը տա Շիվա կարենայ կատարել: Կոյն իրիկունը յինկամը ժամանակին չհասնելով՝ Ռամային համբերութիւնը հատաւ ու շուգեց սպասել: Հապա տեղոյն աւազէն առաւ ու յիկեալ մը շինեց: Քիչ մը ետքը միւս յիկեալն ալ հասաւ Պէնարէսէն, զոր Ռամա առնելով իր շինած յիկեալին քովը կանգնեց: Բայց երբ Բարդոգայիք տեղւոյս տիրեցին, կ'ըսեն թէ այս երկրորդ յիկեալը, չհանգստեցողով տեսնել այն բարբարոսներն որ Հնդկաստանի երկիրը կը պղծէին, ինքզինքը ծովը հոսեց: Այն տեղին ուսկից Ռամա աւազն առաւ, խոր աւազան մը ձեռացաւ, որ մինչև ցայսօր ա՛մեն այցելուաց կը ցուցնեն: Անոր չորս կողմը բնակութիւններ շինուեցան և տե-



Պրահմին քուրմ մը,
որ զՏառքաս կամ սրբազան գրեանքը կ'ընթերցուի:

զին ա՛նուանեցաւ Վալքիլմար, որ կը նշանակէ Առաւուած աւազոց:

Բայց գիտնալու է թէ այլք այլապէս կ'ըսեն ձեռացած այս աւազանը, որու և Վալոն գիրքս անունը կու տան, որ կը նշանակէ Աւազան եկտի: Կ'ըսեն թէ Ռամա սաստիկ ծարաւ ոգալով և ջուր չգտնելով, նետ մը առաւ ու զետիկը զարկաւ, և այն հարուածէն աւազանն երևան ելաւ: Անոր չորս կողմը այսօր բազմութիւն ծառեր հովանի կ'ընեն, և անոնց մէջէն դեղեցկապէս կը փայլին շատ մը սպիտակ որմերով՝ բաւականապէս և պրահմիններու վայելուչ տեսիլ:

Այս աւազանիս բոլորը մասնաւոր առտիճաններ կան որ մինչև ճացեալ ջրին երեսը կ'իջեցնեն. անհամար բազմութիւն

մարդոց, կանանց և տղայոց, որոց շատը հեռու տեղերէ եկած են, անգաղաք կ'ելլին ու կ'իջնեն՝ այն սրբազան ջրին մէջ լուսնուելով: Դատք իսկ այնք են որ այն աստիճաններուն վրայ նստած՝ երջանիկ զմայման վիճակի մէջ ընկղմած կ'երեւին. առ հասարակ ամենուն շրթունքը ջերմեռանդաբար ազօթք ընելու հետ է: Բակոսայք հոծ են բազմութեամբ. պրահմինք յաճախորդներէն լուճայն կը պաշտանին՝ ի նպաստ իրենց կուսերին. և ճգնաւոր ֆարիք՝ իրենց ոսկրեայ ծանր քառամանակները շարժելով՝ ժողովրդէն ստակ կը մուրան. մինչդեռ երաժշտական փողք և թրմբուկք զգոխային աղմկաւ տկանջ կը խըլացնեն:

Մինչդեռ կառքերինս կը յառաջէ, գաղ-
ղիային 'ի հեռուստ ժայռ մը մատնանիւ
ընեցին:

— Աս ժայռը կը տեսնես, կ'ըսէ նա. այն
ժայռին վրայ ճեղք մը կայ, ուսկից չկայ
Հնդկի որ քերականագրար չանցնի, հա-
մարեւով Թէ կրկին անգամ կը վերակեն-
դանանայ. որովհետեւ նախ և առաջ իրենց
Շիվա աստուածը անցած է:

Եթէ կարելի ըլլար կ'ուզէի քեզ հոս
Պրաշմինի մը տանիւ որ Հնդկաց մէջ մեծ
համբաւ ունի, որովհետեւ հետամուտ է
հնգկային կրօնը վերանորոգելու: Փովը
չաւտ մը աշակերտք ժողոված՝ չարունակ
վէտական գրքց քննութիւն կը գրադի-
նէր յառաջագոյն ճոխ մէկ մըն էր. այլ
ուզելով իւր այս դիտաւորութիւնը անար-
գելք կատար հասուցանել, բոլոր ունեցածը
ծախար է աղքատաց տուել է, միայն իր
ընական փողը տնակը իրեն յատուկ պա-
հելով: Վախեմ անուրը քեզի զարմանք
սխալութիւնք: Խմաստորեանս ուրիշանաւ
կը կոչուի, որ անուշտ չափազանց պարկեղծ
է: Ինքը հիմա ողորմութեամբ կ'ապրի: Ժո-
ղովուրդը այն աստիճանի կը յարգէ զինքը՝
որ իւր սխալութիւնք մեծաւ խնամքով կը հո-
գայ՝ ամեն տեսակ կերակուր տանելով ի-
րեն: Այլ ինքը այն ամենը աշակերտացը
բաժնելով սակաւ մի բրինձով ու բաժնու-
թախով կը շատանայ. և սակայն զինքը
տեսնես ահաւորապէս գէր է:

— Անուշտ ինչպէս սա պրաշմինը, ըսի,
որ հոն բազմութեամբ նստած էր ծխեն,
ի'նչպէս գէր ու ծոյլ երեւոյթ ունի:

— Այդ պրաշմիններէն գաղթական բազ-
մութիւն մը կայ հոս, պատասխանեց գաղ-
ղիային, ըստ որում որ տեղիս Հնդկաց
գլխաւոր սրբավայրն է: Ահա տարակ' ինչ-
պէս կը տեսնես՝ անհոգ ու ծոյլ կեանք մը
կը վարեն, ողջոյն օրը ափիոն ծխելով ու
ծամկելով: Իրենց գերակայութեամբ վրայ
այնչափ է համարմունքներն: Իր ամէն օտա-
րը պիտի կը համարին: Պրաշմինը նուիրա-
կան սուրբ մըն է. քրիստոնէսայ մը անոր
հալի չի կրնար. եթէ ձեռք երկնցընես ի'նչ-
չան բարեկամութեան՝ քստմնելով ետ կը
քաշուի որ չպզծի:

— Թէ այդպէս է, ըսի, թողունք զիրենք
իրենց սրբութեանը մէջ ու ճամբանիս շա-
րունակները: —

Մինչդեռ մենք կը յառաջնէ՝ չըլազայու-
թեան ելլող ճոխից կառքերը՝ արամբ ու
կանամբ լեցուն՝ այլ և այլ ուղղութեամբ
քովերէն կ'անցնին: Ամարանոցաց դռն-
ըր բաց՝ զմայլմամբ կը հայինք այն բազմա-
թիւ տնկոց ու գոյնզգոյն ծաղկանց՝ որ այն

ընկալաւանները նախանձելի կ'ընեն: Հըս-
կայաւորս պանիրտը ամեն դին կը գտնուի.
Իւր ոստոց Թեկըր գէպ 'ի խոնարհ երկըն-
ցուցած՝ միայն յենարան կը բնուէ նոր զա-
ւակի մը արմատը հաստատելու: Բարձրա-
բեղուն լայնատերեւ պանանք իր պտղալից
ծոցը պսակաղարջ կ'երեցնէ: Քոքոն երկ-
նալաց ծողի մը վրայէն հովանոցածէ կը
տարածէ իւր տերեւները, որոց արմատին
քովէն մեծկակ ընկալանք կ'առկախին: Տե-
րեալից, երկայնահիւզ, լայնատարած ման-
կոն իւր անհամար ծաղիկները կ'աւետէ, ու
րոնք քիչ տատնէն Պոմպէյի ամենէն աղիւ-
ռ համեղահամ պտուղը սխալոր ընծայեն:
Այս ծառերուն մէջ խառնուած կը տես-
նեն յովրթոն, որու ճիւղերը ձկնորկի մե-
ծութեամբ ու ծանր նարինջներով գէպ 'ի
գետինը կը հակին, և որոց մէջ կ'ամփոփի
այն քաղցրահամ ու զովաջոցիչ օշարակը՝
որ ծարաւելոյ ուղեւորին սփոփում կը շնոր-
հէ: Արանչիլի և ապշեցողոյց է արդարեւ
այն բուսաբերութիւնը, և մարդ չի կրնար
չգզալ նախանձ մը այն բնականաց բազդին
վրայ որոց բաժին ինկած է, թէպէտ և կ'ա-
ւաղէ անոնց մեղկութիւնը:

Վարելվար շէնք ետեւուս թողով՝ գե-
ղեցիկ ու լայն ճամբու մը վրայ կ'իյնանք որ
Մաւաթար — Հէլ լորին գաղաթը կը հանէ:
Այս ճամբան ալ Սըր Ճէմիէի ձիւնիպոյ ճոխ
փարսիին տառաածնունդութեանը արդիւնք
է: Քանի որ վեր կը բարձրանանք՝ տեսու-
րանք որ առջեւուս կը պարզի՝ երթալով
կը գեղեցիկանայ: Պոմպէյի կողին և անոր
նաւահանգիստը հստոյցնէ կ'ընդարձակի
'ի սքանչալոյ մի ամենեղուն մեղ: Կարծես
բնութիւնը մասնաւոր ճիշդ թափեր է ինք-
զինքը գեղեցիկացնելու: քոքոններու ան-
տառները, բլուրները, հեռաւոր լեռները,
ջուրը, բնութիւնն ողջոյն միով բանիւ, հան-
դերձ մարդկային մեծագործութեան ար-
դիւնքներով՝ անպատմիկ լուսոյ գեղեցի-
կութեամբ կը շողորան: Միւր օտից ներ-
քեւ եղած ընդարձակ ծովածոցը, Պոմպէյ
քաղաքակղզոյն լեռնալեռնով՝ երկու ծո-
վու խորշ կը ձեւանայ: Քաղաքը կարծես
անտառախիտ անաւաններաց մէջ թաղուած
է. հոյակապ շէնքերը յաջորդաբար իրարու
ետեւ ետեւ կը կանգնեն, և անոնց մէջէն
ցիրուցան կը տեսնուին եկեղեցեաց երկ-
նալաց աշտարակները: Շէնք շէնքի յաջոր-
դելով՝ կը հեռանան, կը ստուերանան,
մինչև այժմ չլացընող պայծառ արեւուն
նշուլից մէջ անստուգաբար կը թաղուին:
Քաղաքէն անդին կը տեսնուի ընդարձակ
նաւահանգիստը իւր հարիւրաւոր կղզիներ:

րովը ու քաղաքաբնակ շրջաններովը, և անկէջ անդին Վոնկանի լիւններուն գաւաթները, որոնցմով կը յանգի տեսարանը: Համբան մեծագործ ջրամբարի մը կը հանգիւի որ դեռ ևս չինով թեան հետ է, և որու ծախը պիտի ըլլայ ինչ միլիոն ֆրանք, ի Պոմպէի թէպէտ և. փորը առատ է, բայց և այնպէս տէրութիւնը այն կարեւոր տարերի առաւելութեանը համար անհոգ չի կենար: Այս ջրամբարէն անդին կը սկսինք տեսնել Փարսից Լուսթեան Աշտարակաց միջոցին բարձր պարիսպները: Գիշատիչ թռչնոց երամբ որ անոնց վրայէն կը սաւառնին՝ վրանիս սարսուռ կը բերեն: Հոս տեղը բնութիւնը ահապի երևոյթ մը կ'առնու: Այն գիշատիչ թռչուններէն զուրս ուրիշ էակ մը չիս տեսնիր որ այն ժայռուտ կողերը այցելէ. պարիսպները մերկ կը կանգնին. կարծես թէ բնութեան ճիշդ իսկ ի դերն կ'ենլէ այն տարօրինակ վայրը մարդկութեան աչքէն ծածկելու: Վայրենի երևոյթ մը ունի արտաքինապէս, որ ուրիշ դարուց, ուրիշ բարուց և ուրիշ զգացմանց վայել է: Ան, տարազեղաց ժայռից կողերը կարմրազգայն հողոյ մէջէն կը ցըցուին, գոգցես ի նմանութիւն սպազեկոց մարդկութեան որ այն բարբարոս ջնջման գրեմանիցոյն դէմ ողբալով բողբոջէր: Հոսակ ուրեմն կառքերնիս կը զաղարկ փոքր զարուկերի մը առջին, զոր հետի ելլելու ենք: Ոստիկանութեան գինուոր մը մեզ կը դիմաւորէ, ու տոմսակցին առնելով պահապանին կը տանի, մինչդեռ մենք այն տեղոյն մեծ ու խորհրդաւոր դրան առջին կեցած՝ այս տրծանադրեալ խօսքերը կը կարգանք. « Հոս բաց ի փալսից ուրիշ մէկս մը քոյլ տառալ չի երև տեսել »:

Պահպանին հրաւիրելովը դրան սեմը կը կոխենք՝ և իսկայն տեսարանը կերպարանափոխ կ'ըլլայ, և տեսարանին հետ նաեւ մեր քստմնափուշ զգացումն ալ: Ընդարձակ վայր մը կը բացուի առջևնիս, ծուռադարձ, ծաղկալից, վայելչատես և, իբր 6:30:30 քառակուսի մեզր: Անգէտ ոք չի կրնար գուշակել թէ այն գեղեցիկ տեղոյն վրայ, Ջրադաշտի օրինաց հետեւող Փարսիի իւր մեծեալ տիրելոյն նմանիւր անհամար գիշատիչ թռչնոց առջևը կը նստէ ի կեդրոնիս:

Այն ընդարձակ շրջապատին մէջ հինգ բոլորչի սպիտակագոյն աշտարակի կան ալ գիս անգին ցրուած, որոց մեծագունին ծախը 50,000 իրա սղէրլին եղած է. իսկ միւսներունը միջին հաշուով քսանական հազար իրա: Մեծագոյնը շուրջ շուրջանակի ութը մեզր բարձրութիւն ունի և ին-

նքունուերկու շրջապատ: Գետնէն իրեք մեզր բարձրութեամբ երկըթէ գուռ մը կայ, ուր ելլելու համար քանի մը աստիճանաւ ասնդուղ շինուած է:

Անգէղը, ազուաք և այլ գիշատիչ թռչունք այն աշտարակաց շրթունքին վրայ մշտապէս կը թափն. անոնց խլացուցիչ աղաղակը և զաղրոտի տեսիլն մարդուս վրայ սարսուռ կը բերեն: Ոմանք կարծես յգիտացնալ մարդկային մարմնով՝ ծոյլ ծոյլ կը ննջեն և կամ փետուրնին կը յարգարեն. այլք կարծես անհամբեր որսի կ'ըստան, թող այն քաղաքիւր որ օդու մէջ կը սաւառնին և աշտարակները կը դիտեն: Երեսակայտ թիւնս ինձ այն զազանաց վրայ մարդկային արեան հետք նշարել կու տայ. ամենուր հայեացքը կատաղութեան երեւոյթ մը ունի և կարծես մարդկային մարմնոց անցած են: Սարսուռ մը կը բռնէ զիս երբ պահապանը կը սկսի մկննդ թէ ինչպէս դիտել այն զազանաց մագիւններուն կ'աւանդուի:

Գետ ևս ժամ մը չկար որ գիակ մը դըրուեք էր այն աշտարակին մէջ որու առջին կեցած էինք, և հետքն իսկ չէր մնացեր բաց ի ոսկորներէն: Ուրեմն այն անգեղց բազմութիւնն որ շրջապատին վրայ կեցած էին՝ կերամիկն մարսելու կը հանգչէին: Աշտարակէ իբր վեց քայլ հեռու չորս աղքատին երեւութով Փարսիք, գետինը նստած գէպ ի այն երկըթէ գուռը կը նայէին ուշադրութեամբ ու պատկառանք. կարծես սրտներին կը տրոփէր. կարծես այն իրենց սիրելիին հոգեւոյն վերանայուն կը սպասէին, որ քիչ մը առաջ այն աշտարակին մէջ գրուած անհետացած էր: Յանկարծ մէկը թափով կանգնեցաւ, երկու քայլ դէպ յառաջ գնաց, ինկաւ ծնգաց վրայ, խոնարհեցուց գլուխը գետինը ու մնաց լռիկ՝ ինչպէս թէ աղօթէր: Մղում մը զիս դէպ յառաջ մը կըէր. կ'ուզէի մերձենալ այն աշտարակ վոքը խմրին, կ'ուզէի հետեւնին խօսակցել, իրենց ցաւը, իրենց յոյսը տեղեկանալ. սակայն պահապանին արգելքը, և աւելի ցաւակցելոց պատկառանքը զիս յետս կտանցոյց:

Այ ումեք թող տեսնել է այն աշտարակին մերձեանալու. նոյն իսկ Փարսիի թէպէտ կրնայ մինչև սանդղոց ոտքը հալիլ, բայց անկէ անդին չ'իջնիր յառաջն. միայն դատարար կամ հրոյ բուրմէ իշխանութեան ունին աստիճաններէն վեր ելլել և աշտարակին դռնէն ներս մտնալ:

Տեղիս ոյնպէս վայելչապէս զարդարեալ է որ անգէտը չի կրնար գուշակել թէ այն զրախտաւոյն վայրը ողջոյն մարդկու-

թևան մը նշխարքը գազանաց ձեռքով լնալինք ընելու կը ծառայէ։ Ասկիտ անդին կը յաճինք 'ի տես այլ և այլ դրից։ 'ի գուր կը խնդրիմք յիշատակարան մը, նշան մը, որ հանգուցելոյ մը անցը յիշատակի։ տխուր զգացմամբ մը սրտեղին իս կը յուզի։ կարծես այն տեղոյն դրան սեմէն ասղին աւմենայն մարդկային գորով կը դադարի։ Ծառերուն վրայ գիշատիչ գազանք կը թառին, որմոց վրայ գիշատիչ գազանք կ'աղմըկին։ գլուխներուս վրայէն գիշատիչ գազանաց երամբ կը սաւառնին, և ահռելի ձայներով օդը կը թողացընեն։ Նոյն իսկ պահապանը որ քովերէնէ կը քալէ՝ քրտմենիք, անզայն և անգույն երևոյթ մը աների միայն նպատակը այն գազանքը մարդկային մարմիններով կերակրել կը թուի։ կարելի է արդեօք այն տեղոյն բնակիչ մը ծնողական սէր զգայ, բարեկամական գորով, կամ սիրոյ գաթի։ Ո՛րչափ տարբեր 'ի մէջն որ սիրելեաց յուզարկաւորութիւնը ամենասուրբ, ամենավսեմ ու նուիրական պարտք կը համարիմք։ որ գոհիւք կը ճգնիմք մեր սիրելոյն նշխարքը անարատ անդգնեցընել յիշատակարանի մը ներքեւ, ուր ըստէս ստէպ այցելելով մեր արտասուքը և մեր աղօթքը անոր աճիւնից հետ խառնել, և իւր յիշատակը մեր սիրոյն հետ մշտնջենաւորել։

Մական կ'երեւի թէ Փարսիք իսկ մենաւոր չեն թողուր տեղին։ մերթ հոս մերթ հոս այն Զրադաշտի հետեւող ջերմեանդներէն կը տեսնենք՝ որ բոտ արեւելեան ոճին դիտինք նստած՝ աղօթագիրք մը ձեռքիսին՝ դէպ 'ի խոնարհող արեւը իրենց երկիւղեան աղօթքը կ'ուզեն։ Տղայք իսկ ումանք անհոգաբար ասղիս անդին կը վաղվրտեն։ և զօտարքս տեսնելով 'ի սլաւ վայրէն՝ հետաքրքրաբար կը մերձենան։ Եւ սակայն՝ կ'ըսեն՝ մտօքս՝ այս անմեղք աղիւր տունից կը մշակուին յապագայ սնունդ այս գազանաց։ և ո՛ր գիտէ թէ չուտով աստեղ ալ իրենց փոքր մարմնովը այն անյագները պիտար չզրկեցընեն։

Փոքրիկ մատուռի մը քովէն կ'անցնինք։ — Այս տեղս, կ'ըսէ պահապանը, կը ծառայէ յուղարկաւորաց իրր ժողովատեղի, որ կը հաւաքուին աղօթելու մեռելոյն վրայ։ —

Քիչ մը հեռու՝ աշտարակաց մօտ՝ տաճար մը կը նշմարենք։ այն նուիրական տեղւոյն մէջ անշիջանելի կը պահուի այն սուրբ կրակը, զոր տառջին փախտականք 'ի Փարսից հետերնին բերեր են Պարսկաստանէն, և որ ոչ երբեք չիջած է։ Այն հուրը միշտ սաւնտայ անուշահոտ փայտով կը սը-

նուցանեն։ անանկ որ այն խորհրդաւոր տեղէն, ուր երբեք Եւրոպացւոյ սրբապիղծ ոտքը կոխած չէ, շարունակ նոյն հաստէտ փայտին անուշաբոյրը կը բուրէ։ Այն հրոյ բոցին լոյսը՝ մասնաւոր լուսամտից մէջէն թափանցելով՝ շշուտիկ աշտարակաց որմոց վրայ կը դարնէ։

Սակայն մենք պահապանէն Փարսից յուղարկաւորութեան մեկնութիւնը կը խընդրենք։ Եւ պահապանը մեզ մեծ արկղի մը քովը առաջնորդելով՝ աշտարակի մը փոքրագիր նմանութիւնը կը ցուցնէ, և աւոր ներքին կազմութիւնը բացատրելով՝ արարողութիւնը կը մեկնէ։

Փարսի մը երբ կը մեռնէ՝ դիակը կ'ըզգեցնուցանեն սպիտակ հանդերձիւք, բաց դառաղի մը վրայ կը հանգչեցընեն ու վրան ճերմակ քօղ մը կը ձգեն։ Չորս Փարսիք գազաւոր ուսերնին կ'առնուն և քայլով բլուրը կը տանին։ Ա՛յնքէ երկի մարդոց թոյլ տուեալ է ետեւէն յուղարկաւոր երթալ, ամենը սպիտակազգեստ, յոտից մինչև ցոլուի։ Այսպէս մեռնողին ազգականք ու բարեկամք զոյգ զոյգ կը հետնին, իւրաքանչիւր զոյգը սպիտակ թաշկինակի մը ծայրէն բռնած։ Կազապին անմիջապէս քովէն երկու երկայնամօրուս Փարսիք կը բաւին, որ են քուրմ, և որոց միայն թոյլ տուեալ է աշտարակին ներսը մտնել։ Չեւս քերտին ձեռնոց կը կրեն, և դիակին ոսկորներուն միայն երկայն ունելիքներով կը դաշին։

Կապտոր նախ փոքր մատուռն մէջ կը հանգչեցընեն, և հոմ մեռելոյն դիակին վերայ աղօթք կը մատուցուի։ որմէ ետքը կը վերցընեն և աշտարակներէն մէկուն քովը կը տանին։ Ճնողք, աղագականք և բարեկամք մինչև այն տեղ կրնան մերձենալ։ անկէց անդին միայն բրմաց իրաւասուութիւնն է։ Քուրմը մտնելը կը մերկացընեն և սանդղէն իլլելով՝ դիակը դռնէն ներս կը մտցընեն։ Իրենք ալ ապա մտնելով՝ դիակին ոտքէն ու գլխէն բռնած՝ այնպէս կը զետեղեն որ զիշատիչք միայն մարմինը կարեն նսն ուտել՝ առանց անդամները առնելու տանելու։

Աշտարակը ծածք չունի, այլ բոլորովին բաց է։ ներսէն բոլորչի տախտակամած կամ գետնայարկ մին է, որ ծաղաւառմէ գէպ 'ի կեդրոն կը խոնարհի։ Այս տախտակամածը իրիք համակերպոն չըջանակ կամ՝ զօտի բամբուռած է։ Իսկ մէջտեղը կամ՝ կ'դրոնք խոր փոս մը կամ՝ հոր մըն է, տանգընէնք միկը տրամադրուի։

Արդ այս իրեք չըջանակները կամ՝ զօտիներն որ ըսինք, բազմաթիւ շառաւիղն են։

բով մասն մասն բաժնուծ է, անհանկ որ բազմամթիւ օրօրոցներն կը ձեւացընեն, որոց վերայ կը հանդէսցընեն դիակները՝ Ներքնագոյն կամ կիզորներն մերձաւոր գոտին որոշեալ է աղայոց դիակներուն. միջինը կանանց, իսկ հեռագոյնը կամ շրջապատները էրիկ մարդոց վերաբաւեցեալ է:

Փութիւն այս բաժանմանց մէկին վրայ դիակը հանգչեցընելէն յետոյ՝ կը քաշուին ու գուռը կը գոցեն. Այն անհամար գլխատիչք որ աշտարակին որմոց վրայ անյապ և անհամարներ կը սպասեն, հազիւ թէ միջոյցը ազատ կը տեսնեն՝ ահռելի աղաղակներով դիակին վրայ կը յարձընին, և ինչ ժամու մէջ պատառ պատառ ըրած կ'անհետացընեն, պարզ ոսկերէ կայտ մը թողլով, զորոնք ապա արեւը կը ճնորձեցընեն. Քանի մը օր ետքը քութիւն կը դառնան աշտարակը, և այն ցամաքած ոսկորները ունելիքներով ժողովելով՝ հորը կը լեցընեն, Հոն ժամանակէն, արեւը և անձրեւները գանձոնք կը մանցընեն, կը փոխացնեն. և այն փոփոխերը, կ'ըսեն Փարսիք, անձրեւաց ջրերը և ստորերկրեայ հոսանքները կ'աւելուն ծովը կը տանին: Այս մարդկային նշխարաց անհուն անհանկ ծանր ծանր և հաւաքունի այս հորերուն մէջ, որ տասներէնգ տարիէ ի վեր մէկի մը մէջ հազիւ երկու մեզը թանձրութեամբ խառ մը ձեւացած է:

Այս կերպով է որ Փարսիք իրենց նախնաց, նախնին Պարսից, սովորութեանը կը հետեին. որոնք նմանապէս մարդկային դիակները լիբանց գագաթը կը թողնէին ի կիւր գլխատիչ թռչնաց: Աղօղորտանական օրինաց նայելով, մանաւանդ այնպիսի տաք կլիմայի տակ, դիականց այս կերպ ընալ ինչ սպառու մը շատ օգտակար է. որովհետեւ օդը ապականող ամեն գոյացութիւնք չուտով կ'անհետանան. Բայց նրկատեղով մարդկային բնածին զգացումը որ իւր մեռելը մասնաւոր սրբավայրի մը մէջ յարգածք ամփոփելը նուիրական պարտք մը կը համարի, քաղաքակիրթ մարդը չի կըրնար քստմունք մը չլցալ:

Այս ամենայն տեսնելէն յետոյ մարդ չի կրնար չխորհրդածել թէ ինչպէս Փարսիք որ Հնդկային ժողովրդոց մէջէն ամենէն քաղաքակիրթը կը թուին և գորտու հոգւոյն աւելի մերձակօրք, կրնան դեռ ևս իրենց նախնեաց այս հին սովորութիւնը պահել, հանգուրժելով որ անգեղք, ագռաւք և այլ գլխատիչք իրենց սիրելեաց մարմինը պատառ պատառ աւելին, ինչպէս կարելի է սրտերնին տանի տեսնել այն անհամար մազաւոր գագառք որ մարդկային մտով յապեալք՝ աշտարակաց

որմոց, ծառոց ու թփուտից վրայ կը թանին, ու շմառակը քստմնելով թէ զուցէ մարսելու հետ ըլլան իրենց զաւակին փափուկ միսը, կամ իրենց հօրը, մօրը, եղբօրը սիրտը:

Եթէ Փարսիք մը այս խորշումէ առարկին քիչը այսպիսի պատասխան մը կուտայ: Տարեք սուրբ են ու պղծելու չէ զոնոնք մարդկային մտով որ անսուրբ է: Մարդուս դիակը այնքու չէ, որովհետեւ կրակը կը պղծի. թաղելու չէ որովհետեւ անով հողը պղծել կ'ըլլայ. գետը կամ ծովը նետելու չէ, և ոչ իսկ բաց օդու մէջ թողլու է որ ննիսի, որովհետեւ այսու օդն ու ջուրը անմարդու ընել կ'ըլլայ: Ընդհակառակն այս կերպ ջնջմամբ մարդկային մարմինը մէկ մարմինէ միւս մարմինը կը մտնայ, և այնպէս Ձրագաշտի խօսքը կը կատարուի որ ըսեր է, թէ մահը առհասարակ զճիւղը և զաղբաւոր պիտի հաւասարեցընէ: Եւ արդարեւ այդպէս ալ կ'ըլլայ. որովհետեւ Պոմպէյի ամենէն ճոխին ու բարձրագունին դիակը յետին աղբատին դիակին քովը կը դրուի այս լուծութեան աշտարակին մէջ. և երկուքին ոսկերք խառն կը գլորին հասարակայնց հորին մէջ:

Թէպէտ և ամենաճշմարիտ է այս ետքի սկզբունքը, սակայն քաղաքակիրթ ու կրօնասէր մարդը, որ ամեն բանի մէջ վսեմ և աղնուական զգացումը կը ընտանէ, նուիրական ևս սուրբ բրած է հանգուցելոց նըշխարքը ու հանգստարանը: Եւ որչափ աւելի վնեմութիւն ու բանաստեղծութիւն չինք գտնել միւր քրիստոնէական յուզարկաւորութեանց մէջ. մանաւանդ այն նուիրական սրբավայրից մէջ, ուր աղբաւոր և ճոխ անհասարակ քովէքով անգորտութեան քունը կը ննջեն, յետին այցելութեանը սպասելով որ իրենց ոսկերք միւս անգամ պիտի մարմնացընեն, ինձ կարծես գերեզմանէն անցին ալ պիտի քաղցրանայ մտածութիւնս, թէ իմ ոսկերք հոգաւորոց մը ներքեւ կը հանգչին, ամպշովանի ունեւնալով աստեղտղտարգ երկինքը, տիրաւզեցեաց ուռնելոյ մը զովմարտ հովանին, և յուսոյ խաչի մը վկայութիւնը:

Այցելութիւններ լնացուցած էինք. զէս ի գուռը ուղեւորելով յետին նայեցուածք մը տուինք տեղւոյն, ու զստիվայրն ինչեւով:

— Մի անգամ եեթ, ըսինք, արժան է տեղւոյս այցելել, մարդկութեան բարոց ու սովորութեանց ծանօթանալու նպատակաւ: —

Մինչ կը մեկնիմք խորհրդածելով տեսածներնուս վրայ, կը հարցընենք.

— Հապա թէ մէկը առերեւոյթ անդգայ՝ մեռեալ կարծուելով, ինչպէս երբեմն կը գիտի քաղաքակիրթ ազգաց մէջ, և որ հոս իսկ յուղարկաւորութեանց փութացուցմամբ գծուարին չէ որ պատահի, ողջ ողջ այլ անդգայ որ գրուի այն աշտարակը՝ գազանաց մագիլներուն առջին, ինչպէս կարելի է ազատի եթէ ժամանակին զգացու մը վրան դայ:

— Ատոր դարմանը հոգացած է, կը պատասխանէ Քաղղիացին. և կ'ըսեն թէ այգափաի գէտը մը հանդիպած է: Աշտարակին չրթունքը, ներսի կողմէն, լար մը հաստատած է, որու միջնորդութեամբ վտանգեալը կրնայ փրկուի:

Երիտասարդ Փարսիի մը համար կը պատմեն, թէ տկար, հիւանդոտ, ու շատ վշտերէ նեղեալ, օր մը անկողնին մէջ անդգայ կը գտնուի: Փոքր քննութենէ մը ետքը մեռեալ վճռուելով, ըստ պահանջելոյ տեղւոյն սովորութեան, յուղարկաւորութիւնը շուտ մը կը պատրաստուի. որովհետեւ կիմային վերմութեանը պատճառաւ մարմինը փութով ու հեշտեալ կը սկսի լուծուիլ ու նկիւլի, որ ողջոց ամենալուտան գաւոր պարագայ է:

Մեռեալ կարծուած երիտասարդը ըստ սովորութեան սպիտակ հագուեցուցած դագաղը կը դրուի, սպիտակ քօլը վրան կը ձգուի, և բարեկամք և ազգականք սպիտակագլխոստ՝ կը վերցնեն ու մեռելոց վայրը կ'ուղեւորին: Հոն օդը խղճուկ և արեւը կիգիչ, դամներ կը փութացընեն արարողութիւնը համառօտելու. և ապա ամենը կը քաշուին, զիակը բրմայ ձեռքը թողլով. որք մերկացուցած՝ աշտարակը կը մոցընեն, իւր տեղը կը գետեղեն, և մեկնելով՝ աշտարակին դուռը հռննուն կը գոցեն:

Թէ ինչ կը պատահի աշտարակին մէջ մարդ կրնայ գուշակել. անգեղք որսին վը-

րայ կը յորձրկին. սակայն այն մեռեալ համարեալ զիակը բուռն մղում մը կը սպասէր կենդանանալու: Հազիւ թէ առջի կրողին հարուածը կը զգայ, իսկոյն անդգայ վիճակէն կը զարթնու, և մահու ռարսափը վրան ուժ բերելով յուսահատաբար գազանաց դէմ կը կռուի: Լարին վրայ յարձրկելով՝ աշտարակին չրթունքը կ'ըլլէ և ինքզինքը միւս կողմը կը հոսէ: Հոն որտատրոփ, վարհուրացին այն մահազոյժ վրտանգէն՝ կը կանգնի, դուռը կը դիմէ, և ստուերի մը պէս աշաւած պահապանին առջևէն կ'անցնի և արիւնաթաթախ՝ ինչպէս էր՝ քաղաքը կ'աճապարէ: Բայց թէ այնուհետեւ ինչ կ'ըլլայ այն կերպ յարուցեալը ոչ սք գիտէ. վրան զի այնպիսի յարուցեալք թէ զիպին, կենդանեաց ընկերութեան մէջ տեսնուիլ չեն կարող: Հարկ է որ ծածկուին, անհետանան, և վրանին ամենակին չխօսուի: Այնպէս չարագուշակ կը համարի այն անխուսափելի սրբավայրին մէջէն իբր գասալիք ելլի փախչի:

Ասկայն ինչպէս կը տեսնէք, բնակութիւնք այս բլրոյս վրայ երթալով կը բազմանան, և օր աւուր կը մերձենան այս մահու խիթալի ու քստմնելի վայրը: Եւրօպացին չի կրնար իր քստմունքը զսպել այս բարբարոս սովորութեան տեղին այնպէս մեծ տեսնելով իւր բնակարանին, և շարունակ լսելով այն գիշատիչ գազանաց չարագուշակ ու խլացուցիչ աղաղակները: Արդէն տրտունջը ու բողոքը կը յաճախեն, ստիպելով զվարձութիւնը տեղին հեռացնելու. և այս բողոքոց աւելի ուժ կու տայ վերջի օրերս գիպածը: Տեղւոյն միւրձակայ Եւրօպացոյ մը պարտիցին մէջէն փոքր տղու մը թեւը գտնուեցաւ կրքնեալ ի գիշատչաց: Զտրամալու չէ եթէ ընդ հուպ Փարսիք բռնադատին այլուր խնդրելու իրենց մեռելոց սպառիչ ապաստանարանը:

Դը շարունակուի:

Հ. ՅԱ. Վ. ԽԱԳԵՐՏԵԱՏ

